

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԵՄՀ ՌԻՄ) ԵՄՀ ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմինն է:
- 1.2. ԵՄՀ ՌԻՄ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:
- 1.3. ՌԻՄ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական և բարոյական զարգացմանը:
- 1.4. ԵՄՀ ՌԻՄ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԵՄՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 1.5. ԵՄՀ ՌԻՄ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողական խորհուրդ, անգլերեն՝ EIU Student Council:
- 1.6. ԵՄՀ ՌԻՄ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ազատության 24 թիվ 2, Եվրասիա միջազգային համալսարան:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. ԵՄՀ ՌԻՄ-ի նպատակն է՝
 - ա/ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
 - բ/ ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
 - գ/ համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
 - դ/ մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
 - ե/ իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
 - է/ կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
 - թ/ մասնակցել ԵՄՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
 - ժ/ ինչպես նաև զբաղվել ուսանողներին հուզող այն խնդիրներով, որոնք նախատեսված չեն սույն կանոնադրությամբ:
- 2.2. ԵՄՀ ՌԻՄ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:

3. ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 3.1. ԵՄՀ ՌԻՄ նախագահի և անդամների ընտրությունները կազմակերպում է ԵՄՀ ՌԻՄ ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ընտրական հանձնաժողով):
- 3.2. Ընտրական հանձնաժողովը բաղկացած է թվով 7 հոգուց, որոնցից 3-ը ներկայացվում են ԵՄՀ գիտ. խորհրդի, 3-ը՝ ԵՄՀ ռեկտորատի և 1-ը՝ ԵՄՀ ռեկտորի կողմից:
- 3.3. Ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրվում են հանձնաժողովի կազմից՝ ընտրական հանձնաժողովի առաջին նիստում:
- 3.4. Ընտրական հանձնաժողովը՝
 - ա/ հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
 - բ/ կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
 - գ/ անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում ընտրություններում ներկայացուցչական համամասնության վերաբերյալ (ընտրությունների ըստ կուրսի հոսքերի ու խմբերի կազմակերպում և այլն),
 - դ/ ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքները,
 - ե/ եռօրյա ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները. ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:
- 3.5. Ընտրական հանձնաժողովի անդամները չեն կարող լինել ՌԻՄ-ի թեկնածուները:
- 3.6. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԾՆԱՎՈՐՈՒՄ

- 4.1. ԵՄՀ ՌԻՄ կազմված է նախագահից, ֆակուլտետի ավագներից, կուրսի ավագներից և 10 այլ անդամներից:
- 4.2. ԵՄՀ ՌԻՄ աշխատանքները ղեկավարում է բարձրագույն գործադիր մարմինը՝ ՌԻՄ նախագահը: ՌԻՄ նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:
- 4.3. ՌԻՄ նախագահ չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանը անդամակցող թեկնածու:
- 4.4. Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում են ուսանողների կեսից ավելին: Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ուսանողների պարզ մեծամասնությունը:
- 4.5. ՌԻՄ անդամների կեսից ավելի փոփոխության պարագայում կազմակերպվում է ՌԻՄ նախագահի նոր ընտրություն:
- 4.6. ԵՄՀ ՌԻՄ նախագահը ներկայացնում է ՌԻՄ-ն ԵՄՀ Գիտական խորհրդում: Ռեկտորատում և համալսարանի այլ օղակներում հանդես է գալիս ՌԻՄ-ի ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ: Նա ներկայացնում է ԵՄՀ

- ՈՒԽ-ն և ուսանողությանը ՀՀ և արտերկրի բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, մասնավոր անձանց մոտ:
- 4.7. Սահմանված ժամկետը լրանալու կամ ԵՄՀ-ում ուսումնառն ավարտելու դեպքում, ԵՄՀ ՈՒԽ նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են ՈՒԽ նախագահի նոր ընտրություններ:
- 4.8. Ֆակուլտետի ավագների կազմը համալրվում է տարին մեկ անգամ կազմակերպվող Ֆակուլտետների ավագների ուղղակի ընտրության միջոցով: Ֆակուլտետի ավագներն ընտրվում են յուրաքանչյուր ֆակուլտետի կուրսերի ուսանողների կողմից:
- 4.9. Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը:
- 4.10. Ֆակուլտետի ավագ կարող է դառնալ այն ուսանողը, ում վերջին երկու կիսամյակի միջին գնահատականը 4 և ավելի (20 միավորանոց գնահատման համակարգով 13 և ավելի) միավոր է, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- 4.11. Ընտրությունը կատարվում է ըստ ֆակուլտետների: Ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- 4.12. Կուրսի ավագը ընտրվում է տարին մեկ անգամ կազմակերպվող կուրսերի ավագների ուղղակի ընտրության միջոցով: Ավագներն ընտրվում են յուրաքանչյուր կուրսի ուսանողների կողմից:
- 4.13. Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը:
- 4.14. Կուրսի ավագ կարող են դառնալ այն ուսանողները, որոնց վերջին երկու կիսամյակի միջին գնահատականը 4 և ավելի (20 միավորանոց գնահատման համակարգով 13 և ավելի) միավոր է:
- 4.15. Կուրսի ավագի ընտրությունը կատարվում է ըստ կուրսերի: Ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- 4.16. Ուսխորհրդի մնացյալ մասը համալրում են ինքնուրույն կամ ուսանողների խմբերի կողմից թեկնածությունը ներկայացրած և առավելագույն ձայներ հավաքած 10 անդամները:
- 4.17. Նախագահի տեղակալի, պատասխանատու քարտուղարի թեկնածությունը առաջադրվում է ՈւԽ անդամների կազմից: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է անդամների կեսից ավելին:
- 4.18. ԵՄՀ ՈՒԽ նախագահի տեղակալը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորմամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները:
- 4.19. ՈՒԽ նիստերը հրավիրվում է շաբաթը մեկ անգամ՝ ՈՒԽ նախագահի կողմից: Անհրաժեշտության դեպքում ՈՒԽ նախագահը կարող է հրավիրել արտահերթ նիստ: Արտահերթ նիստ կարող է գումարվել նաև ՈւԽ անդամների 1/2-ի պահանջով:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Ուսանողական խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են ԵՄՀ հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ԵՄՀ Կանոնադրությանը, սույն Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

6. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- 6.1. Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է Ուսանողական խորհրդի որոշումների կանոնակարգային համապատասխանության և ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:
- 6.2 Հանձնաժողովի կազմը (ընդհանուր թվով երեք հոգի) ընտրվում են ռեկտորատի կողմից՝ երկու տարի ժամկետով՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, որը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ԵՄՀ ՈՒԽ նիստերին:
- 6.3 Վավերացնում է ՈՒԽ նախագահի կողմից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:
- 6.4 Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է միայն Ռեկտորատին:

9. ՈՒԽ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

9.1 ԵՄՀ ՈՒԽ-ն վերակազմավորվում է ԵՄՀ Ռեկտորատի որոշմամբ: